346

1. Եկ Տիրոջը գովենք
Ու Նրան փառաբանենք,
Հիսուսի անունը
Մեր հայ ազգին վկայենք:
Մեր Տիրոջը գովենք
Ու Նրան միշտ մեծարենք,
Հիսուսի գործերը
Բոլոր ազգերին պատմենք:

Օ, ի՜նչ հիանալի
Տեր ունենք մենք,
Որ կարող է մեզ
Փրկել ու ազատել:

2. Եկե՛ք մեր երգերով
Նրան օրհնենք ու գովենք
Ու մեր ամբողջ կյանքով
Տեր Հիսուսին փառք բերենք:
Եկե՛ք միասնաբար
Սուրբ Հոգով ջերմ աղոթենք,
Հիսուսի գալստյանն
Սպասելով՝ պատրաստվենք:

3. Ահա Նա գալիս է,
Մեր աչքերը բարձրացնենք,
Հիսուսի հետ մեկտեղ
Երկնի փառքերը մտնենք:
Քանզի Նա է միայն
Արժանի առնելու փառք
Եվ պատիվ, զորություն
Հիմա և միշտ, հավիտյան: